**Հատիկի վրայի ջարդվածքները** տեղի են ունենում գլխավորապես պատահական հրումներից, վոր ստացվում են հրացանի ընկնելու, նրան հավաքելու, քանդելու և մաքրելու ժամանակ: Հատիկը ջարդվածքներ բոլորովին չպիտի ունենա. նրա մակերևույթը պետք է սևացրած լինի:

Եթե ջարդվածքը չի փոփոխում հատիկի ընդհանուր բարձրությունը և խփելու վրա չի ազդում, հատիկը պետք է փողից բաժանել և ջարդված տեղը մաքրել հղկիչ խարտոցով, վորի համար հատիկը պետք է տեղավորել հատուկ գործիքի մեջ: Հրացանի խփելու փոփոխման դեպքում, հատիկը պետք է փոխել: Հատիկը մաքրելուց հետո պետք է սևացնել կամ քիմիապես ներկել:

**Նշանոցի ծռվածությունը.** Հրաձգության ժամանակ խփելու անկանոնություն է նկատվում, իսկ նշանոցը զննելու ժամանակ՝ նշանոցի թիթեղի ծռվածություն: Այդ տեղի են ունենում պատահական հրումներից, ամենից հաճախ հրացանի ընկնելու ժամանակ:

Նշանոցը փողի վրա պետք է ամուր դրված լինի և փորատի մեջ ճոճում, ազատ շարժում չունենա. Նշանոցի թիթեղը պետք է հիմքի հետ ամուր դուրգամած լինի և ծռվածություն ամենեվին չունենա. Նշադիտոցը պետք է մաքուր և ճիշտ տեղավորված լինի, կանոնավորող պտուտակը պետք է պինդ պտուտակվի թիթեղի մեջ:

Նշանոցի թիթեղի ծռվածությունն ուղղելու համար անհրաժեշտ է նշանոցը բաժանել փողից, վորի համար պետք է նախապես խարտոցով մի քերթ անել նշանացի հիմքի առջեվի մասի և փողի վրա, վորպեսզի հետո հնարավոր լինի վորոշել նրա ճիշտ դրությունը. Նշանոցի բաժանումը պետք է դեպի աջ կողմը կատարել, վորից հետո արճիճի սալիկի վրա դրած նշանոցի թիթեղին պղնձե մուրճով խփելով թիթեղի ծռվածությունն ուղղել և նրա ճշտությունն ստուգել քանոնով ու աչքով:

Նշանոցը նախապես քաշած քերթի համեմատ փողի վրա դնելուց հետո, անհրաժեշտ է հրացանի խփելու ստուգում կատարել:

**Մարտական զսպանակի թուլությունը** տեղի է ունենում երկարատեվ ծառայությունից և զսպանակի վատորակ մխումից: Մարտական զսպանակի թուլության հետեվանքով հաճախակի փստոցներ են տեղի ունենում: Զսպանակի զննության ժամանակ նկատվում է նրա կուչ գալը կամ ծռվածությունը:

Զսպանակի երկարությունը 18 վոլոր եղած ժամանակ պետք է հավասար լինի 65 **մմ**, կուչ գալ թույլատրվում է 5 **մմ**—ից վոչ ավելի. ծայրերի վոլորները պետք է կռացրած լինեն և հարթության ձեվով խարտոցած լինեն: Եթե զսպանակն այնքան է կուչ եկել, վոր հաճախակի փստոցներ են տեղի ունենում, այդպիսի զսպանակը պետք է փոխարինել նորով. ծայրահեղ դեպքում զսպանակը կարելի է ձգել և նորից մուխ տալ:

**Նետիչի ծռվածությունը տեղի է** ունենում փամփշտանոցում պինդ նստած պարկուճը դուրս քաշելու ժամանակ ու փակաղակն անփույթ հավաքելուց: Սովորաբար ծռվում է նետիչի թիթեղաձև մասը: Ծռված նետիչն ուղղում են պղնձե (կարմիր) մուրճով, արճիճե սալիկի վրա, և նրա ճշտությունը վորոշվում է աչքով և հավաքած փակաղակի մեջ կատարած աշխատանքով:

**Նետիչի ապուռի փշրվածությունը.** Փակաղակի գործողության ժամանակ կրակած պարկուճները դուրս չեն գալիս, իսկ զննության ժամանակ հայտաբերվում է, վոր ապուռը փշրված է. այդ միշտ պահանջում է նետիչը նորով փոխարինել: Նոր նետիչ պատրաստելը կարելի է կատարել սեփական միջոցներով: Կրակած պարկուճները շամփուրով դուրս հրելը չի հանձնարարվում:

Նետիչի և հրահանի կողիկի դուրս պրծնելը տեղի է ունենում փակաղակը հաճախակի քանդելու հետեվանքով և մանավանդ նետիչները հաստ հանիչով կամ այլ առարկաներով, օրինակ՝ խարտոցի ծայրով, մեխով և այլն, դուրս հրելու հետեվանքով: Այդպիսի դեպքում պահանջ-

վում է նոր ձողիկ դնել: Իր տեղը դրած ձողիկը ձեռքով հանում վրա բավականին ուժ գործադրելով պետք է տեղից շարժվի: Ձողիկների ծայրերը կարելի յե նորմալից մի քիչ ավելացնել:

**Զարկանի տակ ճեղքված ձողիկի բացվածքի մոտ** տեղի յե ունենում ծռված կամ հաստ ձողիկ դնելուց: Զարկանն իր ուղղությամբ պետք է կանոնավոր լինի, նրա կոթունը պետք է լավ հղկած լինի, ձեսաչը վոչ մի թերություն չպիտի ունենա: Զարկանը, ճեղքված ունենալու դեպքում, պետք է փոխարինել նորով: Յեթե զարկանը սեփական միջոցներով է պատրաստվում, ապա այն պետք է պողպատից պատրաստել, իսկ առջևի մասը մուխ տալ և թողնել մինչև 276 ջերմաստիճանը:

**Փակաղակի կոթունի մանեկը դժվարությամբ պտտվելը.** Մանեկը պտտվելը ու յետ պտտվելը դժվարությամբ է կատարվում, իսկ յերբեմն էլ մանեկը չի մտնում ակոսվածքի մեջ: Այդ տեղի յե ունենում փակաղակի կոթունի մեջ մանեկի ակոսվածքի տրորվածություններից, ժանգոտածությունից, իսկ ամենից հաճախ էլ մանեկը սխալ պտտելուց և յետ պտտելուց (մանեկի միջի ակոսվածքը մաշ է):

Մանեկը պտտվելն ու յետ պտտվելը պետք է ազատ լինի, բայց 3—4 անգամ պտտած մանեկը խոշոր ճոճում չպիտի ունենա, իսկ մինչև դեմ առնելը պտտված մանեկը պետք է անցնի փակաղակի կոթունի կտրվածքի յեսեվը: Յեթե ակոսվածքի վրա ջարդվածքներ են հայտաբերված, ապա ակոսվածքը պետք է ուղղել պտտակահատի միջոցով: Յեթե փչացած են ակոսվածքի սկզբի յերկու վոլորը մանեկն անպետք է համարվում:

Ագուստի վրայի ջարդվածքներն առաջանում են ամենից հաճախ անակնկալ հրումներից և անփույթ վերաբերվելուց: Մարքին ագուստն իր ուղղությամբ պետք է կանոնավոր (ուղիղ) լինի լավ լաքած և միտեսակ գույնի ներկած լինի, մանր ջարդվածքները, վոր չեն ազդում հրացանը պահելու ու նրա հետ վարվելու վրա, կարող են տեղի ունենալ:

Ագուստի ջարդված տեղերը ուղղելու համար, պետք է լաքած մակերեվույթն ըզձերով վերցնել մինչև փայտի մերկանալը՝ դրանից հետո ջարդված տեղի վրա տաքացրած գոճխեժ (ցելլակ) են դնում և գոճխեժը տաքացնելով մինչև յեռալը, տեղը նուսացնում են պողպատե մուրճի թեթև հարվածներով. ապա ավելորդ գոճխեժը վերցնում են խարտոցով, հավասարացնելով փայտի մակերեվույթի հետ, մաքրում են մանր համարի ապակե թղթով, իսկ սպիտակած տեղը ներկում են ագուստի ընդհանուր գույնի համեմատ և ծածկում են լաքով:

**Ագուստի փայտի ճաքերը և փայտի պոկվածքները** ստացվում են հրացանի կոթով պինդ առարկաների խփելուց:

Ագուստի փայտը պետք է պինդ տեսակներից լինի (վողորենի—բերյոզա, ընկուզենի), ըստ հնարավորին. առանց վուստերի (խիլերի), ճաքերի և այլն: Աննշան ճաքերը, վոր չեն ազդում ագուստի ամրության վրա կարող են տեղի ունենալ:

Ագուստի փայտի պոկված տեղում սեղանի (տրապեցիայի) ձևի մի փորատ են պատրաստում, նույն տեսակի փայտից մի կտոր են պատրաստում այդ փորատի ձևի ու ծայրերի համեմատ, ըստ վորում պատրաստված փայտի կտորի թելերը նույն ուղղությունը պիտի ունենան, ինչ վոր ագուստի փայտի թելերի ուղղությունը: Դրանից հետո կտորը փակցնում են սոսնձով, լավ շորացնում են տաշում են ագուստի ձևի համեմատ, մաքրում, ներկում ընդհանուր գույնի համեմատ և ծածկում լաքով: Ագուստը ներկելու համար բեյց (մորիլկա) յե գործադրվում:

## ՀԱՎԱՔԱԾ ՀՐԱՑԱՆԻ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Փողատուփի մեջ փակաղակի դժվարացած շարժումը** տեղի յե ունենում փողատուփի մեջ կողմնակի մարմինների առկայությունից, փողատուփի ժանգոտած լինելուց, խոշոր ջարդվածքներից և ներսի ծռվածություններից:

Փակաղակի շարժումը պետք է սահուն և առանց կանգառումների լինի. փակաղակի բացումն ու փակումը պետք է ազատ տեղի ունենա, առանց ձեռքով մեծ ուժ գործադրելու:

Այդ անսարքությունները ուղղելու համար անհրաժեշտ է հրացանը քանդել, փակաղակն և փողատուփի բոլոր մասերը լավ մաքրել և, յեթե ժանգ կա, այն մաքրել վերեվում նշանակած յեղանակով. յեղած ջարդվածքները պետք է մաքրել հղկիչ խարտոցով, վորից հետո յուղել և, հրացանը հավաքելուց հետո, ստուգել փականային մեխանիզմի աշխատանքը:

**Փակաղակի դուրս թռչելը փողատուփից** տեղի յե ունենում ձգանի զսպանակի պտտակները մինչև վերջը չպտտելուց և հրահանի պուակի կամ զսպանակի ատամի կլորանալուց:

Այդ թերությունը վերացնելու համար անհրաժեշտ է հրացանը քան-

դել և մինչև վերջը պտուտակել ձգանի զսպանակի պտուտակները, յե-թե կլորացել է հրահանի պսակը, անհրաժեշտ է խարտոցել հրահանի առջևի հարթությունը, մինչև վոր բոլորովին կվերանա կլորությունը:




Նկար 26. Ձգանի զսպանակի ատամը:

**Հրահանը մարտական վոտքից թույլ իջեցումը** տեղի յե ունենում ձգանի զսպանակի ատամի մաշվածությունից և ձգանի զսպանակի պտուտակները մինչև վերջը չպտուտակելուց: Հրահանը նորմալ դեպքերում պետք է իջնի (բաց թողնի) 0,8 **կգ**—ից վոչ պակաս և 1,75 **կգ**—ից վոչ ավելի ուժի ճնշման տակ:

Ձգանի զսպանակի ատամի մաշվածության դեպքում, կարելի յե այն մաքրել կարբորունդյան սրոցով, այդ դեպքում ատամի բանող անկյունը չպետք է 75°—ից ավելի լինի (Նկար 26):

**Հրահանի զիլ (դժվարությամբ) իջեցումը** տեղի յե ունենում ձգանի կամրջակի պարտակի և ձգանի պոչի ծռվածությունից:

Այդ թերությունը վերացնելու համար ծռված մասերը պետք է ուղղել պղնձե (կարմիր) մուրճով արճիճե սալիկի վրա. վորից հետո պետք է հավաքել վայրիջույց մեխանիզմը և ձգանի ուժն ստուգել զսպանակավոր կշեռքով:

**Փստոցները**, բացի վատորակ փամփուշտներից, տեղի յեն ունենում մարտական զսպանակի սեղմվելուց, կուչ գալուց կոտրվելուց կամ ծռվելուց, զարկանի ծռվածությունից, ասեղի ծռվածությունից և փակաղակի կոթունի փորատի մեջ նրա դժվարացած շարժումից:

Մարտական զսպանակի այն ուժը, վոր անհրաժեշտ է ձիգ կատարելու փամփշտին հարված տալու համար, պետք է առնվազն 12 **կգ** լինի:

Մարտական զսպանակից կախված դեպքերում, զսպանակն անհրաժեշտ է փոխարինել նորով, իսկ ծռված մասերն ուղղել:

**Վառոդային գազերի պոռթկումը** դեպի փողատուփի ներսը կարող է տեղի ունենալ, յեթե փամփշտանոցը մաշված է, փակաղակը փոխարինված է նորով, փամփշտի գդակը ծակված է ասեղով, փամփու-



շտն ինքն անսարք է (ճեղքեր գդակի տակին պարկուճի մարմնի վրա, շարժվող գնդակ) և յեթե փակաղակի կոթունի հարթությունը լավ չի կպչում փողատուփի ծնկաձև փորատի յետահարվածի ուսին:

Գազերի պոռթկումը կարող է այրվածք հասցնել կամ վիրավորել հրաձգին, ուստի փակաղակն ամուր հարդարած պիտի լինի փողի կտրվածքի համեմատ և փակաղակը փակած ժամանակ նրանց միջև յեղած բացը (զազոր) պետք է լինի 0,01 **մմ**—ից վոչ ավելի:

**Հրացանի անկանոն խփելը** (կողքի ուղղությամբ) տեղի յե ունենում հատիկի կամ նշանոցի դեպի մի կողմը տեղաշարժից, հատիկի գագաթի ջարդվածքից, նշանոցի կամ փողի ծռվածությունից և ագուստի փողակալի մեջ փողի անկանոն դրությունից:

Հատիկի դեպի մի կողմը տեղաշարժի դեպքում, հատիկը պետք է տեղափոխել դեպի այն կողմը, դեպի ուր խփում է հրացանը, և նորից խփելը ստուգել. հատիկի տեղափոխությունը պղնձե սեղմիչի միջոցով պիտի կատարել. Նշանոցի տեղաշարժի դեպքում, նշանոցը պետք է տեղափոխել դեպի հրացանի խփելու հակառակ կողմը: Հատիկի կամ նշանոցի տեղափոխությունից հետո խփելու ստուգումը վերջացնելուց հետո անհրաժեշտ է սուր հատիչով քերթ անել հատիկի հիմքի, հատիկի առջևի հարթության, նույնպես և նշանոցի հիմքի և փողի վրա. յեթե զգացվում է վոր հատիկը կամ նշանոցը թույլ է տեղը նստած, պետք է ամրացնել դրանց՝ կերների միջոցով դրանց մետաղը փողի մետաղի մեջ նստեցնելով: Յեթե փողը ագուստի մեջ կանոնավոր չի նստում (մի կողմի վրա յե նստում), պետք է այնպես հարդարել, վոր փողի ներքևի մակերևույթը հավասարաչափ նստի ագուստի փողակալի մեջ:

**Հրացանի բարձր կամ ցածր խփելը** տեղի յե ունենում նշանոցի ծռվածությունից, հատիկը ցածր կամ բարձր դնելուց, փողի ծռվածությունից, փողը ագուստի հետ անկանոն կերպով ամրացնելուց (հենարանի պտուտակով թույլ ամրացումը):

Յեթե հնարավոր չե հրացանի խփելը կանոնավորել նշանոցի կանոնավորող պտուտակը պտտելու և նշանոցի թիթեղը բարձրացնելու կամ իջեցնելու միջոցով, ապա անհրաժեշտ է հատիկը փոխել, յեթե հատիկը բարձր լինի, պետք է փոխարինել այն, բայց վոչ ավելի, քան 0,5 **մմ** տարբերություն ունեցող հատիկով. հատիկը խարտոցել չի կարելի:

**Ձիգերի ցրման մեծացումը**, բացի վատորակ փամփուշտներից,

տեղի յե ունենում փողի առերի կլորացումից, փողաբերանի մասի մաշվածությունից և փողը ազուսի հետ անկանոն ամրացնելուց:

Փողանցքի մեջ առերի կլորացման դեպքում, փողը, թողնվում ե առանց նորոգելու: Փողանցքի փողաբերանի մասի մաշվածության դեպքում, կարելի յե խարտոցելով կտրել փողաբերանի մասը, փողի յերկարությունը պակասեցնելով 2—3 սմ—ից վոչ ավելի, ըստ վորում խարտոցումն վերջացնելուց հետո անհրաժեշտ ե փողի կտրվածքի յեզրերը մի քիչ, 0,25 սմ չափով թեք խարտոցել թե փողանցքի ներսի և թե փողաբերանի դրսի կողմից, իսկ փողը լավ մաքրել ու զննել, վորպեսզի խարտոցելու հետեվանքով փողանցքում մետաղի մանրունք չմնա: Փողը ազուսի հետ անկանոն ամրացնելու դեպքում պտուտակել մինչև վերջը հենարանի պտուտակը:

## ԽՓԵԼՈՒ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Խփելու ստուգում կոչվում ե այն փորձնական հրաձգությունը, վոր նպատակ ունի դիպման միջին կետի վորոշ դրության հասնել նշանառության կետի նկատմամբ (նրա վորոշ չափով բարձրացում կամ համընկնում նշանառության կետի հետ) և պարզել ստուգվող հրացանի խփելու կուտակությունը:

Խփելու ստուգումը պետք ե կատարել. ա) փոքրակալիբր հրացան ձեռք բերելու կամ պահեստից այն ստանալու դեպքում. բ) հրացանը զենքի արհեստանոցից վերադառնալուց հետո. գ) այն բոլոր դեպքերում, յերբ հրաձգության ժամանակ հայտնաբերվում ե գնդակների մշտական խոտորում դեպի մի կողմը, կամ ըստ բարձրության, կամ նրանց չափազանց մեծ ցրում:

Խփելու ստուգումից առաջ փոքրակալիբր հրացանը պետք ե խնամքով զննել, փողանցքը սրբել, փամփուշտները տեսակավորել: Յեթե անսարքություններ հայտնաբերվեն, հրացանը պետք ե ուղարկել զենքի արհեստանոցը:

Խփելու ստուգումը, վորպես կանոն, պետք ե կատարել 25 կամ 50 մ վրա. իսկ յեթե ստուգումը վորևե վորոշ հեռավորության վրա տեղի ունեցող հրաձգությունից (օրինակ՝ 75 մ վրա մրցական հրաձգությունից) առաջ ե կատարվում, ապա այդ պետք ե կատարել այն հեռավորությունից, վորից յենթադրվում ե անցկացնել այդ հրաձգությունը:

Հրաձգությունը պետք ե, ըստ հնարավորին, տիրում կատարել, իսկ



յեթե տեղում տիր չկա՝ արտաքին պատճառների ազդեցությունից փոքրիշատե պաշտպանված տեղում (օրինակ՝ ձորում): Յեթե դրանցից վոչ մեկը չկա, խփելու ստուգումը կարելի յե կատարել ամեն մի (անվտանգ) տեղում, բայց այդ դեպքում ստուգման համար պետք ե ընտրել խաղաղ, առանց քամու յեղանակ, մեղմ և հավասար լուսավորում, այսինքն այնպիսի պայմաններ, վոր ամենից լավ նպաստավոր են հրաձգության համար:

Խփելու ստուգման համար գործ են ածում կլոր թիրախը (№ 9ա—кс-32—32 թ. հրաձգության կուրսերի № 9ա թիրախը կամ այն, վորի վրա յենթադրվում ե հետագայում հրաձգություն կատարել, (նկար 27): Հրաձգությունը կատարվում ե պառկած դրությունից փոկի միջոցով. պառկած՝ հենարանից կամ նստած, հատուկ ստուգողական նըստարանից: Հրաձիգը, խնամքով նշան բռնելով թիրախի սև խնձորի ներքեվի կտրվածքի տակին, առանց շտապելու մեկ մեկի յետեվից 4 գնդակ ե արձակում:

Կլոր թիրախի վրա խփելու ստուգման ժամանակ անհրաժեշտ ե հասնել այն դրությանը, վոր դիպման միջին կետը (նկար 28) համընկնի սև խնձորի կենտրոնի հետ:



Նկ. 27

Դիպման միջին կետի կողքի ուղղությամբ խոտորման դեպքում, հատիկը պետք ե տեղափոխել պղնձե սեղմիչի օգնությամբ դեպի այն կողմը, դեպի ուր խոտորվել ե դիպման միջին կետը, վորից հետո հրաձգությունը կրկնել: Վորպեսզի ավելի հեշտ լինի հետեվել ու վորոշել հատիկի տեղափոխության չափը, օգտակար ե նախապես նշան անել պղնձե գծիչով հատիկի թաթիկների և նրա հիմքի վրայով, վորից հետո արդեն տեղափոխություն կատարել:

Դիպման միջին կետի ըստ բարձրության խոտորման դեպքում պետք ե, գործելով կանոնավորող պտուտակով, փոփոխել նշանոցի բարձրությունը (բարձրացնել իջեցնել), աշխատելով հասնել այն դրու-

թյան, վոր դիպման միջին կետը համընկնի սև խնձորի կենտրոնի հետ: Յեթե դիպման միջին կետը սև խնձորի կենտրոնից բարձր է, նշանոցը պետք է իջեցնել (պտուտակը դեպի ձախ պտտել), յեթե ցածր է, ապա պետք է բարձրացնել (պտուտակը դեպի աջ պտտել):




Նկ. 28

Կանոնավորող պտուտակով գործելիս, պետք է հիշել, վոր պտուտակի մեկ պտույտը (360°) փոփոխում է դիպման միջին կետի դրությունը.

25 մ վրա հրաձգության ժամանակ—2,5 սմ—ով
50 „ „ „ „ —5 „ „
100 „ „ „ „ — 10 „ „

Փոքրակալիբր հրացանի խփելու ստուգումը վորսորդական նպատակներով կատարելու ժամանակ, պետք է հասնել այն դրությանը, վոր դիպման միջին կետը համընկնի նշանառության կետի հետ, խփելու ստուգման համար ընտրելով վորևէ ժամանակ հրաձգության հավանական (միջին) հեռակայությունը:

Փոքրակալիբր հրացանի խփելու ստուգումը կուտակության տեսակետից կատարելու համար, ոգտակար է փամփուշտների նորման ավելացնել և մինչև 10 հասցնել, նկատի ունենալով, վոր փոքրակալիբր հրացանի խփելը կուտակության տեսակետից նորմալ է համարվում այն դեպքում, յեթե 10 գնդակից 8 (2 ամենահեռացած գնդակը կարելի յե չհաշվել) տեղավորվում են վերստուգիչ (կոնտրոլ) բոլորակի մեջ հետևյալ տրամագծով:

4 սմ 25 մ վրա հրաձգության ժամանակ
8 „ — 50 „ „ „ „
16 „ — 100 „ „ „ „

Անհրաժեշտ է մատնանշել, վոր վորոշ դեպքերում այդ նորմաները կարող են չկատարվել վոչ թե հրացանի մեղավորությամբ, այլ փամփուշտների անբավարար վորակի, հրաձգության համար տարբեր ժամանակի բաց թողած, տարբեր պարտիաների փամփուշտներ գործածելու պատճառով և այլն:

Խփելու ստուգման հետևանքները պետք է գրանցել հաշվետու քարտի մեջ: Խփելու ստուգումը վերջացնելուց հետո, հատիկի ճիշտ



դրությունը հիշելու համար, հատիկի և նրա հիմքի վրա նշան (գիծ) է արվում սուր հատիչի ոգնությամբ: Հատիկը, իսկ յեթե հարկավոր է, նաև նշանոցի դիտոցը սևացնում (լակով ծածկում) են:

## ՀՐԱՑԱՆԸ ՄԱՔՐԵԼՈՒ ԵՎ ՅՈՒՂԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Բանեցվող փոքրակալիբր հրացանի մաքրումն ու յուղումը պետք է կատարվի. ա) յուրաքանչյուր հրաձգությունից հետո, բ) բաց ոդում, նույնպես և շենքի մեջ տեղի ունեցող պարապմունքներից հետո, գ) տասն որը մեկ անգամ, յեթե հրացանն առանց գործածության է մնում:

Փոքրակալիբր հրացանը մաքրելու համար սովորաբար հանում են միմիայն փակաղակը: Հրացանի լիակատար քանդումը կատարվում է հրացանի շատ կեղտոտվելու դեպքում, նույնպես և անձրևից հետո: Վերջին դեպքում, յեթե ագուստի փայտը խոնավացել է, փողից նրա բաժանումը կատարվում է միմիայն ագուստի չորանալուց հետո:

Հրացանի մաքրումը պետք է կատարել սեղանի, նստարանի կամ մի վորևէ փռած շորի վրա, վար պետք է նախապես խնամքով մաքրել ավազից, կեղտից և այլն: Մաքրելու համար պետք է պատրաստել սարքին պատկանելիք, մաքուր կակուղ լաթեր, կամ բամբակ պարանի կտորներ. ծեղերից մաքրած խծուծ, կերոսին, ալկալիական բաղադրություն և հրացանի յուղ:

Հրաձգությունը վերջացնելուց հետո անմիջապես, ըստ հնարավորին, հենց հրաձգության վայրում, փողանցքի մեջ խոզի մազի խոզանակի, խծուծի կամ լաթի ոգնությամբ մտցնում են ալկալիական բաղադրություն, վորը սրբում են 2—3 ժամից վոչ շուտ: Հրաձգության ժամանակ վառոդային գազերը բավականին խոր թափանցում են փողի պատերի մետաղի ծակոտիկների մեջ: Ալկալիական բաղադրության նշանակումն է՝ վոչնչացնել վառոդային գազերի վնասակար ազդեցությունը (չեզոքացնել—անվնաս դարձնել թթվածությունը և տարրալուծել վառոդի այրման հետևանքով ստացված կարծր մնացորդները): Յեթե վորևէ պատճառով ալկալիական բաղադրություն չլինի, փողանցքը պետք է յուղել հրացանային սովորական յուղով: Ձմեռն այդ նպատակի համար հրացանային յուղի յերկու մասին պետք է ավելացնել մաքուր կերոսինի մի մաս:

Հրացանը, նրա փողանցքի մեջ ալկալային բաղադրություն մտցնելուց հետո, պետք է մաքրել 2—3 ժամից հետո:

Փողանցքի մաքրումը կատարվում է հետևյալ կարգով.

ա) Շամփրի մաքրիչը (ակոսվածք կամ ծրաս) հավասարապես փաթաթում են խծուծի շերտով (բամբակի պարանի կտորներ) այնպես, վոր նա մտնի փողանցքի մեջ մի փոքր ուժով, լցնելով ակոսները: Դրա համար խծուծը կարելի յե ծալել 8 թվանշանի ձևով, խծուծը նրա խաչաձև մասով դնել մաքրիչի ծայրին և ամրացնել այն՝ ծայրերը վոլորելով, դեպի տարբեր կողմերը և հետո խծուծի թելերն ուղղել մաքրիչի յերկայնությամբ:

բ) Մաքրիչի վրա փաթաթած խծուծը թրջել կերոսինով այնպես, վոր խծուծը տամուկ լինի և վոչ թե թաց:

գ) Հրացանը դնել ուղղաձիգ, ծնկների միջև, շամփուրը փողանցքի մեջ մտցնել, առաջ տալ այն փողանցքի միջով, մինչև շամփրի յերկարության կեսը. ապա պետք է հրացանի կոթն իրենից առաջ տալ, մի վորևե բանի հենել, ձախ ձեռքով հրացանը բռնել նրա փողաբերանի մոտ, վորից հետո շամփուրը դանդաղ և սահուն կերպով առաջ տալ փողանցքի ամբողջ յերկայնությամբ. առանց շամփուրը ծռելու և մաքրիչը հասցնելով միայն մինչև գնդակի մուտքը: Հետո շամփուրը պետք է յետ քաշել, առանց մաքրիչը փողանցքից հանելու: Մաքրիչը խծուծով փաթաթած 2—3 անգամ պետք է առաջ ու յետ տալ, ապա խծուծը փոխել, կերոսինով թրջել և նորից մաքրել: Փողանցքի մաքրումը, խծուծը փոխելով, շարունակել այնքան, վոր խծուծը միանգամայն մաքուր լինի, առանց յուղի, կեղտի, կարմրության, ժանգից դեղին գույնի, այլ միայն մետաղի կապտություն ունենա: Այդ դեպքում կեղտը պետք է տարբերել կապտությունից, վոր մնում է խծուծի վրա նույնիսկ մաքուր փողանցքը սրբելիս, և առհասարակ պետք է խուսափել փողանցքը չափից դուրս յերկար ու ուժեղ սրբելուց և ջանասել, վոր նրա մակերևույթն անպայման փայլի:

Յեթե մաքրելու ժամանակ շամփուրը խրվի փողանցքի մեջ, ապա չպետք է աշխատել շամփուրը դուրս քաշել կամ ավելի առաջ տալ, այլ պետք է փողանցքի մեջ մի քիչ տաքացրած յուղ լցնել 2—3 րոպեյից հետո փորձել շամփուրը դուրս քաշել, առանց հատուկ ուժի դիմելու: Յեթե այդ էլ չօգնի, պետք է ուղարկել զենքի արհեստանոց:

դ) Մաքրելը վերջացնելուց հետո փողանցքը պետք է սրբել չոր լաթով, բամբակի պարանի կտորներով, կամ խծուծով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Յերկար շամփուր չեղած ժամանակ, փողանցքն ավելի լավ է մաքրել փամփշտանոցի կողմից:



Փամփշտանոցի մաքրումը պետք է կատարել շամփրի վրա հագցրած մաքրիչով, վորը փաթաթած պիտի լինի խծուծով: Խծուծը կերոսինով թրջելուց կամ յուղով խխմեցնելուց հետ շամփուրը մտցնել փամփշտանոցը: Փամփշտանոցը սրբելն ու մաքրելը կատարվում է նույնպես, ինչպես փողանցքը մաքրելը:

Փականակը սրբում են չոր լաթերով, ըստ վորում փորատն ու կտրունները սկզբում մաքրում են կեղտից ու թանձրացած յուղից փայտիկների միջոցով: Յեթե փականակի մասերի վրա վառոդի այրուք է հայտնաբերված, ապա այդպիսին պետք է մաքրել նախ կերոսինով խխմած լաթով, իսկ հետո սրբել չորացնել մաքուր լաթով:

Փողատուփի և վայրիջույց մեխանիզմի մաքրումը կատարվում է նույնպես չոր լաթերի և կակուղ փայտիկների միջոցով:

Ագուսը պետք է սրբել չորացնել չոր լաթով

Մաքրելը վերջացնելուց հետո, հրացանի բոլոր մասերը պետք է յուղել **հրացանային յուղով**: Փողանցքը յուղելու համար մաքրիչի վրա մաքուր լաթ են փաթաթում (կամ շամփրի վրա խոշոր մազի խոզանակ են պտուտակում), վոր չափավոր կերպով խխմեցնում են հրացանայուղով, և շամփուրը մի քանի անգամ սահուն կերպով անց են կացնում ամբողջ փողանցքի միջով, փողանցքի ակոսներն ու առերը, նույնպես և փամփշտանոցն իր թեքատով և գնդակի մուտքը յուղի **բարակ** շերտով հավասարաչափ ծածկելու համար:

Մշտական գործածության մեջ գտնվող հրացանները չպետք է առատորեն յուղել, վորովհետև առատ յուղումը նպաստում է մասերի կեղտոտվելուն, և յուղը, ցուրտ ժամանակ սառչելով, կարող է մասերի անկանոն գործողության մանավանդ փսոցների պատճառ դառնալ: Դրա համար, զենքի յուղումը վերջացնելուց հետո, պետք է մի քիչ սրբել այն՝ ավելորդ յուղը հեռացնելու նպատակով:

Ագուսը յերբեք չի հանվում:

Հրացանը մաքրելու ժամանակ գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել ժանգը հեռացնելուն, յեթե այդպիսին հայտնաբերված է վորևե մասի վրա: Հրացանի վրայի ամենաաննշան կարմրությունը պետք է լաթով մաքրել. ըստ վորում ժանգը նախապես կակղացվում է յուղով: Յեթե ժանգը չի մաքրվում, ապա ժանգով բռնված տեղը պետք է ավելի առատորեն յուղել, և հրացանը վորոշ ժամանակ մի տաք տեղ դնել, վորից հետո ժանգը մաքրել կակուղ փայտից պատրաստած

փայտիկներով: Երբ այդ էլ չօգնի, հրացանը պետք է շենքի արհես-տանոց ուղարկել:

Փողանցքում և փամփշտանոցում գոյացած ժանգը պետք է մաք-րել յուղով թաթախած խծուծով կամ լաթով, **առանց մաքրման այլ միջոց-ների դիմելու,** փողանցքը փչացնելուց խուսափելու համար. Երբ ժան-գը վերոհիշյալ եղանակով չի մաքրվում, հրացանը պետք է շենքի արհեստանոց ուղարկել:

Ժանգը մաքրելիս, պետք է հեռացնել միայն կարմրավուն—գորշ կորկը (փառը), բայց չպետք է աշխատել կոկել ժանգի հետքերը, ա-յսինքն խորտուբորտ տեղերը կամ մանր ժանգերը, վոր մնում են մե-տաղի մակերեվույթի վրա, փառը հեռացնելուց հետո, և նրան փայլատ տեսք են տալիս:

Միանգամ ժանգով բռնված տեղերը հետագայում դեպի իրենց մշտապես ուշադրություն են պահանջում, նույնպես և խնամքով մաք-րում ու յուղում:

Հրաձգություններից 2—3 օր հետո հրացանի յուղը պետք է սրբել և **կրկին անգամ** մաքրել: Կրկնակի մաքրումը կատարվում է ալկալիա-կան բաղադրությամբ, վորովհետև մետաղի միջից թթվացնող գազերի անջատումը դանդաղ է տեղի ունենում, ուստի հրաձգություններից անմի-ջապես հետո նույնիսկ լավ մաքրած և հրացանային յուղով յուղած հրացանի վրա վորոշ ժամանակից հետո կարող է ժանգ երեվան գալ:

## ՀՐԱՑԱՆԸ ՊԱՀԵԼԸ ՈՒ ԽՆԱՄԵԼԸ

Հրացանի ծառայության ժամանակի տեվողությունը և նրա պատ-շաճ վիճակը խոշոր չափով կախված է նրան կանոնավոր կերպով խնամելուց ու պահելուց:

Հրացանը պահելու և խնամելու նկատմամբ պետք է ղեկավարվել հետևյալ կանոններով.

1. Զորամասերում, պաշավիաքիմիական խմբակներում, դպրոցնե-րում և այլն գտնվող հրացանները պետք է պահել բուրգերում՝ յու-րաքանչյուր հրացանի համար հատուկ բներով: Բները պետք է ապահո-վեն հրացանն ընկնելուց: Յուրաքանչյուր բուն պետք է ունենա իր համարը և հրացանի տիրոջ ազգանունը, երբ հրացանն ամրաց-ված է վորևե մեկին: Փոշուց պահպանելու համար բուրգերը պետք է ծածկել կտորից կարած վարագույրներով: Պետք է խուսափել բուրգե-րը դնելուց վառարանների, խոնավ անկյունների ու պատերի մոտ և այլն: Բուրգերը պետք է բարձրացնել հատակի մակերեվույթից (հաշ-վելով ներքեվի տախտակից, վորի վրա հրացանի կոթն է դրվում) 0,5—ից մինչև 0,7 մետր:

2. Հրացանները մասնավոր տերերը կարող են պահել հրացանները պատից կախած, պահարանի մեջ և այլ տեղերում, վոր կարող են հրացանն ապահովել պատահական հրումներից, խոնավությունից և ավելորդ տաքությունից:

3. Տեղափոխություններ կատարելու ժամանակ հրացանը պետք է կրել փոկի վրա, վոր հուսալի կերպով ամրացված է փոկօղերին: Երբ պարագան թույլ է տալիս, հրացանը պետք է պահել պատյանի մեջ: Հրացանը երբեք չպիտի կրել փողաբերանը դեպի ցած:

4. Երկաթուղով ճանապարհ գնալու ժամանակ հրացանը պետք է պա-հել պատյանի մեջ, դնել դարակի վրա և միջոցներ ձեռք առնել, վոր-պեսզի հրացանը հատակի վրա չընկնի, և հարվածների ու հրումնե-րի չենթարկվի:

5. Ավտոմոբիլով և սայլով ճանապարհ գնալիս, հրացանը պետք է պահել պատյանի մեջ և հարվածներից ու հրումներից պաշտպանել:

6. Հրացանը երկար ժամանակ առանց գործածության պահելու դեպքում պետք է սովորականից ավելի թանձր յուղել:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ՀՐԱՑԱՆԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

| № ըստ կարգի | ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Քանակը | № ըստ կարգի | ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Քանակը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հատիկ . . . . . . . | 1 | 26 | Փակաղակի կոթուն . . | 1 |
| 2 | Հատիկի մութակը (հիմքը) | 1 | 27 | Զարկան . . . . . . | 1 |
| 3 | Նշանոց . . . . . . | 1 | 28 | Մարտական զսպանակ . | 1 |
| 4 | Փողի հենարան . . . | 1 | 29 | Ասեղ . . . . . . . | 1 |
| 5 | Միացնող պտուտակի աչիկ | 1 | 30 | Նետիչ . . . . . . | 1 |
| 6 | Հրահան . . . . . | 1 | 31 | Ձգանի զսպանակ . . | 1 |
| 7 | Ձգան . . . . . . . | 1 | 32 | Ատամ . . . . . . . | 1 |
| 8 | Ձգանի կամրջակ . . . | 1 | 33 | Յետ մղիչ հենարան . . | 1 |
| 9 | Կամրջակի պարտակ . . | 1 | 34 | Յետ մղիչի զսպանակ . . | 1 |
| 10 | Խզատակ . . . . . . | 1 | 35 | Նետիչ զսպանակ . . . | 1 |
| 11 | Խզատակի պտուտակ . . | 2 | 36 | Նետիչի ձողիկ . . . . | 1 |
| 12 | Պոչի պտուտակ . . . | 1 | 37 | Ագուս . . . . . . | 1 |
| 13 | Կամրջակի պտուտակ . . | 2 | 38 | Պահպանակ . . . . . | 1 |
| 14 | Միացնող պտուտակ . . | 1 | 39 | Ուսանով . . . . . . | 1 |
| 15 | Ձգանի զսպան. պտուտակ | 2 | 40 | Ուսանովի զսպանակ . | 1 |
| 16 | Նշանոցի պտուտակ . . | 3 | 41 | Ուսանովի զսպանակի հենարան . . . . . | 1 |
| 17 | Փողի ձողիկ . . . | 1 | 42 | Անդրադարձիկ. . . . | 1 |
| 18 | Զարկանի ձողիկ . . . | 1 | 43 | Փակաղակի մանեկ . . | 1 |
| 19 | Ձգանի ձողիկ . . . | 1 | 44 | Ներքևի փոկոցի օղագամ | 1 |
| 20 | Մաքրիչ . . . . . . | 1 | 45 | Վերևի փոկոցի օղագամ | 1 |
| 21 | Մաքրիչի բռնակ . . . | 1 | 46 | Փոկի օղ . . . . . | 2 |
| 22 | Վերին տափողակ . . . | 1 | 47 | Փոկոցի տափողակ . . | 1 |
| 23 | Ներքևի տափողակ . . | 1 | 48 | Նշանոցի հիմք . . . . | 1 |
| 24 | Փող . . . . . . . . | 1 | 49 | Նշանոցի դուրգամներ . | 2 |
| 25 | Փողատուփ . . . . . | 1 | | | |



ՀԱՎԵԼՎԱԾ 2

## ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ԳՆԴԱԿԻ ԾԱԿԵԼՈՒ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

25 մետրի վրա փոքրակալիբր գնդակը ծակում անցնում է.

| | |
|---|---|
| Շամի տախտակների, գերանների, վառելափայտի մեջ . . | 8 սմ |
| Վողորինի տախտակների, գերանների, վառելափայտի մեջ . . | 7 » |
| Բարակ ֆաների դարսած թերթեր . . . . . . . | 3,2 » |
| Մանրախիճ . . . . . . . . . . . . . . . | 8 » |
| Ավազ . . . . . . . . . . . . . . . . | 10 » |
| Չոր կավ, պնդացած . . . . . . . . . . . | 8 » |
| Խոնավ կավ, նոր թափած . . . . . . . . . . | 20 » |
| Խիճ (փշրած աղյուս) . . . . . . . . . . . | 6 » |
| Շլակ (խարամ) պինդ, միջին մեծության կտորներով . . . | 10 » |
| Շլակ կակուղ, մանր, քիչ խոնավ . . . . . . . . | 20 » |
| Աղյուս (առանձին գնդակ) . . . . . . . . . . | 1,5 » |
| Բետոն . . . . . . . . . . . . . . . . | 2 » |
| Յերկաթբետոն (առանձին գնդակ) . . . . . . . . | 1,2 » |
| Յերկաթ (առանձին գնդակը) **ծակում անցնում է** . . . . . | 2 » |
| Յերկաթ(մի քանի գնդակ (մեկ տեղին) . . . . . . | 3 » |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1. Աղյուսե կամ բետոնե պատը, մի տեղին հրաձգություն կատարելիս, խորը ծակվում է անսահման չափով, նայած հրաձգության տևողությանը:

2. Բետոնի կամ յերկաթբետոնի պատին 25 մետր հեռավորության վրա, 90° անկյան տակ կատարած հրաձգությունը վտանգավոր է. ձևափոխված գնդակը և բետոնի խոշոր կտորները յետ են թռչում մինչև հրաձգի տեղը:

3. Բետոնի և յերկաթբետոնի վրա 30° անկյան տակ հրաձգություն կատարելիս, գնդակը ջարդվում մասերի յե բաժանվում և կորցնում է իր ծակողական ուժի մոտ 0,8 մասը: 45° անկյան տակ բոլորովին փշրվում է, հոծ ցալքունները մոտ տեղերում դանակի պես կտրում են 3 մմ ֆաները:

4. Զրահի կամ յերկաթի վրա, 90⁰ մոտ անկյան տակ, հրաձգություն կատարելիս, գնդակը ջարդվում մանր մասերի յե բաժանվում և ցալքոնները, սահելով յերկաթի վրայով, մտնում են մոտակա առարկաների մեջ:

5. Գետնին (հորիզոնական) 25⁰ անկյան տակ հրաձգության ժամանակ գնդակը գետնի մեջ է մտնում. մոտ 20⁰ անկյան տակ գնդակը վոստոստյուն է կատարում, խոշոր չափով ձևափոխվում է, կորցնում է իր ծակողական ուժի մոտ ³/₄ մասը. մոտ 10⁰ անկյան տակ հեշտությամբ ձևափոխվում է, կորցնում է ծակողական ուժի մոտ ¹/₂—ը, 50⁰ անկյան տակ գնդակը չի ձևափոխվում, գլխակոնձի յե անում և կորցնում է ծակողական ուժի մոտ ¹/₂—ը:

6. Փայտի տախտակին (ճամի կամ վոջորենի) 10⁰ անկյան տակ դիպչելիս, գնդակը սահում և վոստոստյուն է կատարում. մոտ 15⁰ անկյան տակ մտնում է փայտի մեջ նորմալ ուժով:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ—3

## ԱՂՅՈՒՍԱԿ *)

Նշանառության գծի նկատմամբ միջին հետագծի բարձրացումները. 22 տրամաչափի փոքրակալիբր հրացանի համար "Լոնգ ռայֆլ" փամփուշտով կրակելիս (սկզբնական արագությունն է 320 մ. (վայրկ):

| Հեռավորություն | Նշանի հեռավորությունը մետրերով | | | | | | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 25 | 50 | 75 | 100 | 125 | 150 | 175 | 200 | |
| | Հետագծի բարձրացումը սանտիմետրերով | | | | | | | | |
| 25 մ | 0 | — | — | — | — | — | — | — | |
| 50 „ | 3 | 0 | — | — | — | — | — | — | |
| 75 „ | 6 | 7 | 0 | — | — | — | — | — | |
| 100 „ | 10 | 15 | 12 | 0 | — | — | — | — | |
| 125 „ | 14 | 23 | 24 | 16 | 0 | — | — | — | |
| 150 „ | 18 | 31 | 36 | 32 | 20 | 0 | — | — | |
| 175 „ | 22 | 33 | 48 | 48 | 40 | 14 | 0 | — | |
| 200 „ | 27 | 48 | 61 | 65 | 62 | 50 | 30 | 0 | |

*) Այս աղյուսակը վերցված է Վ. Ալկալայևի "Հրաձգային սպորտ"—"Стрелковый спорт" գրքից: ՏՕԶ № 7 փոքրակալիբր հրացանի համար այդ կարելի յե ընդունել վորպես կողմնորոշ աղյուսակ:

## ՑԱՆԿ


| | |
|---|---|
| | էջ |
| 1. Առաջաբան | 3 |
| 2. Ընդհանուր տեղեկություններ | 5 |
| 3. Մասերի նկարագրությունը | 6 |
| 4. Հրացանի հավաքելն ու քանդելը | 16 |
| 5. Հրացանի մեխանիզմների աշխատանքը | 18 |
| 6. Հրացանի զննությունը | 21 |
| 7. Հրացանի մանրամասությունների անսարքությունները | 24 |
| 8. Հավաքած հրացանի անսարքությունները | 31 |
| 9. Խփելու ստուգումը | 34 |
| 10. Հրացանը մաքրելու և յուղելու կանոնները | 37 |
| 11. Հրացանը պահելն ու խնամելը | 41 |
| 12. Հավելվածներ | 42 |

ՀՀ Ազգային գրադարան
NL0276642

13 118

Գինը 30 կոպ.

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

Н. ХУДЯКОВ

МАЛОКАЛИБЕРНАЯ ВИНТОВКА
ТОЗ № 7

ГИЗ ССРА Эривань, 1936 г.